1895 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17 (29) ԿԻՐԱԿԻ

№. 107—ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 107

1895 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17 (29) ԿԻՐԱԿԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»:
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամէնայն օր 10—1 ժամ
(բացի կիւրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ
Դուռը և Անգլիա:
Հակասական բայց բարեյաջող լուրեր
Գլադստոնի ճառը:
Դռան պատասխանը պետութիւններին:
Մ-ր Մունդէլլանի նամակը:
Իշխան Հոհէնլոէ և հայկական խնդիր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Վեհ. Հայրապետի մխիթարական կոնդակը: Կայս. ռուս. այգեգ. ընկ. բաժին Կովկասում: Առևտրական դպրոցներ: Զին. նախար. գեն.-ադ. Վաննովսկի: Հալաբաքի Հայոց գերեզմանատունը: Պ. Առաքել Ծատուրեանի բանկէտը Լօնդօնում: Պետ. Տեխ. ճեմարան մտնել ցանկացողները: Բագուից: Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնները ռուսերէն: Բագուեցի պ.պ. բժիշկների ուշադրութեանը: Օպերային ներկայացումներ: Բարիտօն Ամիրջանեանց: Կ. Պօլսի թերթերից: Մայրաքաղաքի լրագրներից: Օգնութեան կարօտ մի ուսանող: Մի ներկայացումն Ճամախում: Նամակ խմբագրութեան: Նկարիչ Կ. Նշանեան:
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՖԵԼԻԵՏՕՆ.—Էրզրում:
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԴՈՒՌԸ և ԱՆԳԼԻԱ

Հայոց խնդրի ձգձգումը շատ է զզվեցնում անգլիացիներին: «Daily Chronicle» լրագրում, որ լորդ Ռօզբերիի օրգանն է, այս օրերս հրատարակված էր, որ իբր թէ Կ. Պօլսի անգլիական դեսպան սէօր Ֆիլիպ Կէրրի շոգենաւը պատրաստ կանգնած է սպասելով կարգադրութեան: Արմատական լրագիրը իր առաջնորդող խմբ. յօդուածի մէջ յայտնում է այն կարծիքը, որ վաղ թէ ուշ ուլտիմատում պիտի յանձնուի սուլթանին: Այդ միակ միջոցն է, ասում է լրագիրը, սուլթան Աբդուլ Համիդին յայտ տալու, որ Անգլիան որոշել է չբաւականանալ լոկ խոստումներով և որ նա վճռել է վերջ տալ քրիստոնեայ հայերի հալածանքներին ու տանջանքներին:

ԳԼԱԴՍՏՈՆԻ ՃԱՌԸ

Անգլո-Հայկական Միութեան համար Գլադստոնը աչքի անցկացրեց Չեստէրում խօսած իւր ճառը, որ թարգմանուելով պիտի հրատարակուի ֆրանսերէն, գերմաներէն և հայերէն լեզուներով: Ճառը կը մտնի Միութեան հրատարակութեանց ժողովածուի մէջ, որ գլխաւորապէս Մաք-Քոլի գրչին է պատկանում: Գրքի ֆրանսերէն թարգմանութիւնը շուտով կը տպագրուի Փարիզում, աշխատութեամբ Ժան Ֆինիոյի, որի՝ «Նահատակ ժողովուրդ» յօդուածը Եւրոպայում մեծ ուշադրութիւն գրաւեց: Մ-ր Թէոդոր Աքսէնտովիչը նկարներ պիտի պատրաստէ: Առաջին տեղը կը բռնի Գլադստոնի պատկերը: Առ այդ Գլադստոնը հետեւեալ յառաջաբանն է գրել.

«Սիրելի Կանոն Մաք-Քօլ,

«Ես չափազանց ուրախ կը լինիմ լսելու, թէ Հայաստանի աղէտի գըրուած Ձեր գրքոյկը շատ է տարածուում, երբ այն կը թարգմանուի օտար լեզուներով, որովհետև գիտեմ, որ դուք՝ որքան մարդասիրութեան սկզբունքի, նոյնքան էլ ճշմարտութեան մասին էք հոգացել և քաջ ըմբռնում էք:

Միշտ Ձեզ բարեկամ
Վ. Է. ԳԼԱԴՍՏՈՆ

Հավարդէն. սեպտ. 15.

ԴՌԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

(«Daily News» 19 սեպտ.)

Սեպհական թղթակցից
Վիեննա, 19 սեպտ.

Լօնդօնի, Փարիզի և Ս.-Պետերբուրգի օսմանեան դեսպաններին ուղարկուած հեռագիրը Հայաստանի համար զիջումների նկատմամբ՝ սկսուում է մի յայտարարութեամբ, թէ Դուռը ընդունել է երեք պետութեանց 6 պահանջները, որովհետև ինքը սուլթանը համապատասխան վճիռ է կայացրել: Առաջինը խօսում է Վերահսկող Յանձնախմբի մասին: Դուռը համաձայնում է, որ երեք պետութեանց թարգմանիչներն անմիջական յարաբերութիւն ունենան Յանձնախմբի նախագահի հետ: Մընացեալ հինգ կէտերի մասին հետեւեալն է խօսում. Դուռը համաձայնում է, որ տեղական ոստիկանները ժողովրդից ընտրուին՝ համաձայն տիրող օրէնքների: Դուռն ընդունում է, որ բոլոր ծառայողները՝ վալիներից ու նահանգապետներից բացառութեամբ՝ ընտրուին թէ քրիստոնեաներից և թէ մահմեդականներից, նայած թէ որևէ տեղի ժողովրդի մեծամասնութիւնը որո՞նք են կազմում: Այս կարգերը պէտք է գործադրուին բոլոր վեց վիլայէթներում, ուր հայեր են բնակվում:

Մ-Ր ՄՈՒՆԴԷԼԼԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Մ-ր Մունդէլլանը Չէֆֆիլդի քաղաքագլխին ուղղած նամակում՝ ասում է հետեւեալը.

«Ուրախութեամբ իմացայ, որ լորդ Սօլզբէրին նոյնքան խստութեամբ է վերաբերւում դէպի հայկական խնդիրը, որքան և նրա նախորդները, և որ նա ևս հետևում է այն ուղղութեանը, որով նոյն պայմանների մէջ՝ ընթացել է լորդ Ռօզբերին: Ես չեմ հաւատում, թէ նրա կողմից կարող է հաստատամտութեան կամ տոկունութեան նուազումն երևալ: Ես չեմ յապաղի պաշտպանել կառավարութեանն այն միջոցների նկատմամբ, որ նա ձեռք կառնէ մի վատթար կառավարութեան գազանութիւններին և օսմանեան պետութեան քրիստոնեաների հալածանքներին վերջ դնելու համար»:

—

«Daily News»-ի Բեռլինի թղթակիցը հաղորդում է, որ իշխան Հօհէնլօէն Պետերբուրգ գնալով առանձին յանձնարարութիւն է ունեցել և խօսակցել է այնտեղ հայկական և չինական գործերի մասին, այլ և ապստամբական կուսակցութեանց դէմ ընդհանուր-եւրոպական միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտութեան մասին:

Իր ճանապարհորդութեան արդիւնքի մասին կանցլերը զեկուցում է արել Վիլհէլմ կայսեր Դանցիգում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վեհափառ Հայրապետը բարեհաճել է պ. պ. Գէորգ Եանգուլեանին և Արզար Յովհաննիսեանին մխիթարական կոնդակ ուղարկել տիկին Կատարինէ Եանգուլեանի մահուան առիթով: Հանգուցեալը վայելել է Նորին Վեհափառութեան ծանօթ լինելու բախտը: 1893 թուականին, բժիշկների խորհրդով, հանգուցեալը ծովային ճանապարհորդութիւն կատարեց դէպի Դամասկոս, ուր նորա քոյրն ու փեսան են ապրում, տիկ. և պ. Կամսարական: Դամասկոսից տիկ. Եանգուլեանը իւր վաղեմի ուխտը կատարելու համար ուղևորուեց ս. Երուսաղէմ և այնտեղ արժանացաւ Հայոց Հայրիկին այցելելու: Գեր. Գէորգ արքեպիսկոպոսը իւր դամբանական ճառի մէջ, որ արտասանեց ննջեցեալի վրայ, յայտնեց, թէ Վեհափառ Կաթողիկոսը պատուիրել է նրան հեռագրով հրապարակաւ «յայտնել Իր վիշտը այդ պատուական կնոջ մահուան առիթով»:

* *

Թոյլ է տրուած Կայսերական ռուսական այգեգործական ընկերութեան բաժին հաստատել Կովկասում:

* *

«Նով. Վրեմ.» լրագիրը հաղորդում է, որ առևտրական կրթութեան ծառայող դպրոցները հաստատուելու են այս տարուայ ընթացքում իսկ: Լրագիրը հաղորդում է, որ ներկայումս նախարարութեան մէջ արդէն 20 խնդիր կայ, որ մատուցել են զանազան քաղաքներ առևտրական դպրոցներ բանալու մասին:

* *

Զինուորական նախարար գեներալ-ադիւտանտ Վաննովսկին այսօր երեկոյեան ժամանելու է Աբասթումանից Թիֆլիզ, և մնալու է այստեղ մի շաբաթ:

* *

Մեզ խնդրում են տպել հետևեալը.

«Ինչպէս յայտնի է Հալաբարի հայոց գերեզմանատան համար նուիրուած է մի դեսեատին հող, որ պատկանում էր իշխ. Բեհբութեաններին: Այժմ, ինչպէս լսում ենք, այդ հողի մի մասն անյայտ անձինքների կողմից վաճառուած է մասնաւոր անձանց 150 ռուբլիով, որոնք արդէն կղմինտրի գործարաններ են շինել այդ հողի վրայ. ինչպէս լսում ենք հողի մնացած մասն էլ շուտով կվաճառուի 2500 ռուբ.: Հետաքրքրական է իմանալ, թէ ովքեր են եկեղեցապատկան հողերի վաճառողները և թէ ինչպէս է որ այդ մասին տեղեկութիւն չունի տեղական Կոնսիստորիան»:

* *

Պետերբուրգի տեխնոլոգիական ճեմարան մտնելու համար այս տարի խնդիրք են մատուցել 676 երիտասարդ, որոնցից ընդունուելու են սակայն ընդամենը 140 հոգի:

* *

ԲԱԳՈՒԻՑ հաղորդում են, որ սեպտեմբերի 14-ին կայծակ ընկաւ Բալախանիի Կասպիական ընկերութեան նաւթային հորի վրայ, որից բռնկեց նաւթային շատրւանը: Այրուեցին նաւթային երկու հորերը և կրակն անցնելով եղբայր Կրասիլնիկեանի հորերին, նրանցից երկուսը լափեց: Հրդեհը սպառնում է դրացի նաւթահորերին. 6 գործաւորներ այրուել են, որոնցից մէկը բոլորովին անհետացել է:

* *

Պատկերազարդ «Պետեր. Ժիզն» շաբաթաթերթում, որ «Նովոստի» լրագրի յաւելուածն է կազմում, հրատարակուած են Պետրոս Դուրեանի երկու բանաստեղծութեան թարգմանութիւնը՝ տիկ. Օ. Չիւմինայի (О. Чюмина): Ցաւելով պէտք է նկատենք, որ այդ թարգմանութիւնը անշնորհ է և ճիշդ գաղափար չէ տալիս բնագրի գեղեցկութեան մասին: Նոյն բանաստեղծութեանց գերմանական թարգմանութիւնը շատ աւելի բարձր է: Նկատենք նաև որ Դուրեանը, երևի սրբագրիչի անուշադրութեան շնորհիւ, Гурьянъ է անուանուած:

* *

ԲԱԳՈՒԵՑԻ Պ. Պ. ԲԺԻՇԿՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆԸ

«Արձագանքի» ընթերցողներին յայտնի է արդէն այն անամօթ վարմունքը, որ իրեն թոյլ էր տուել բագուաբնակ բժիշկ Կօգան՝ իրեն մօտ բժշկուելու գնացող տիկին Վերա Կուչէրովի վերաբերութեամբ: Տիկին Վերայի ամուսին պ. Գրիգորի Կուչէրովը չխորշելով տանել այդ անպատուութիւնը ներկայացել էր բժիշկ Կօգանին և ապտակել նրան. իսկ բժիշկ Կօգանը՝ միայն ճնշուելով իր պաշտօնակիցների պահանջից՝ դանգատ է տուել Կուչէրով ամուսինների դէմ հաշտարար դատաւորին և մեղադրում էր նրանց բամբասանքի մէջ (за клевету): Այդ գործը, ինչպէս կարդում ենք Բագուի «Կասպի» լրագրում, քննուել է սեպտեմբերի 9-ին Բագուի հաշտարար դատարանում և վկաների ցուցմունքներով ապացուցուել է որ արդարև Կօգան բժիշկը իրեն թոյլ է տուել անամօթաբար շօշափելու տիկին Վերա Կուչէրովի պատիւը: Դատարանը արդարացրել է Կուչէրով ամուսիններին: Ուրեմն արդարութիւնը յաղթեց, կարող են բացականչել միամիտ մարդիկ: Իսկ բժիշկ Կօգանը, իսկ նրա վարմունքը: Զարմանալի բան է, ճշմարիտ. մի բժիշկ, որին անպայման հաւատում է հիւանդը, որի սրբազան պարտաւորութիւնը նրան վեր է կացուցանում ամէն մի ստոր կասկածից, որ կոչուած է օգնել ցաւագարներին և տանջուածներին, իրեն թոյլ է տալիս մի անպաշտպան հիւանդ կնոջ անպատուել...և այն էլ այն հիւանդ կնոջ, որ գնացել է բժշկի մօտ բըժշկուելու.. Բայց այդ բժիշկը՝ Կօգանը միևնոյն ժամանակ այնքան գործնական մարդ է, որ այդ բոլոր անելուց յետոյ և սենեակում ապտակ ուտելուց յետոյ էլի այնպէս է անում, որ ինքը դատարանում երևում է իբրև մեղադրող, իսկ Կուչէրով ամուսինները իբրև մեղադրեալներ: Ուրեմն Կօգանի վարմունքը կը մնայ անպատիժ, նա այսուհետև ևս նոյն սիստեմին հետևելով կը շարունակէ հիւանդներ ընդունել և նրանց բըժշկել նոյն ձևով, ինչ ձևով բըժշկել է տիկին Կուչէրովին: Բագուեցի պ. պ. բժիշկներ, ո՞ւր է ձեր պատուասիրութիւնը: Սպասում ենք:

* *

Այսօր արքունական Թատրոնում ըսկըսվում են օպերային ներկայացումները: Պ. Ֆօրկատին այնպիսի ոյժեր է հրաւիրել, որոնք որոշ հռչակ են վայելում Ռուսաստանում, այն է տիկ. տիկ. և օր. օր. Էնկվիստ, Մարչադ-Վիկտորովա և պ. պ. Բրուչէվսկի, Կրուգլով և այլք. հին արտիստներից նա հարկ է համարել հրաւիրելու պ. Դէվիկիէրին, որին Թիֆլիզը այնքան սիրում է: Եթէ աւելացնենք որ օրքեստրի ղեկավարը լինելու է պ. Տրուֆին, ապա կարելի է յուսալ որ այս տարուայ օպերան բաւականութիւն կըպատճառէ մեր հասարակութեան:

* *

Բարիտօն Ամիրջանեանցը, որ երկար ժամանակ կատարելագործում էր իւր ուժեղ ձայնը Իտալիայում, այս օրերս ուղևորվում է Մոսկվա, ուր սեպտեմբերի 25-ին բեմ կը դուրս գայ Կայսերական Թատրոնում:

* *

Կ. Պօլսոյ թերթերում կարդում ենք.

ԴԱԴԱՐՈՒՄ. Ախթեր լրագիրը կանոնի հակառակող ընթացքի մէջ գըտնուած ըլլալով, անպայման կերպով դադրման դատապարտուած է:

* *

Մայրաքաղաքի լրագրների հաղորդած տեղեկութեանց համեմատ արտաքին գործոց նախարար իշխ. Լօբանով-Ռոստովսկին վերադառնալու է Պետերբուրգ սեպտեմբերի 20-ին, ճանապարհների հաղորդակցութեանց նախարար իշխ. Խիլկովը—սեպտ. 25-ին, ելմտից նախարար պ. Վիտտէն—սեպտ. 29-ին, զինուորական նախարար գեներալ-ադիւտանտ Վաննովսկին—հոկտեմբեր ամսուայ սկզբին, արդարադատութեան նախարար

ՖԵԼԻԵՏՕՆ

ԷՐԶՐՈՒՄ

(Էդմ. Նաումանի „Ոսկեղջիւրից մինչև Եփրատի ակունքները" երկասիրութիւնից: *)

—

Էրզրումի դիրքը. քաղաքի բնորոշ յատկութիւնները. ամրոցը. վերջին պաշարումը. փողոցներում եռացող կեանքը. պաշարման դրութիւն. քրիստոնեաների և մահմեդականների մէջ տեղի ունեցած նորագոյն արիւնահեղ կռիւները. վալիի երկու ֆրանսիացի բանտարկեալները. օտար հիւրերի հսկողութիւնը ոստիկանութեան ձեռքով. վատթար ակնկալութիւններ. վալիի մօտ. զգալթէքներ տալու գլացումն. զօրքն ու ոստիկանութիւնը. Էրզրումի հայոց դպրոցը. Սանասարեան. պատմութիւն. վաճառականութիւն:

Բինգեօլ-Դաղի կամ Բիւրակնեան լեռների կամարաձև բարձրութեանց շուրջը սարահարթի վրայ՝ դանդաղ ու հանդարտ հոսում են բազմաթիւ գետեր. Դեռ բաւականին հեռանալով Բիւրակնեան սարերից՝ նեղ վիհերի միջով կարկաչում են դէպի անդունդը և իրենց ջրերը թափում Մուրադ-Չայի, Փրատի կամ Արաքսի հոսանքների մէջ: Մինչդեռ Մուրադ-Չայի ակունքները որոնելու համար պէտք է բարձրանանք Աղր-Դաղի և Արարատի հսկայական լեռները՝ Փրատի կամ արևելեան Եփրատի ակիզբը պէտք է որոնենք անմիջապէս Էրզրումի մօտակայքը, այն լեռնադաշտում, որ հիւսիսարևելեան կողմից սահմանաւորւում է վիթխարի լեռնադագաթներով շրջապատուած բարձրաւանդակը:

Քաղաքը, որի անունը կրում է նաև սարահարթը, տարածուած է լեռնադաշտի մի խորշում և ծածկում է գետնի մի տափարակ բարձրութիւն, որի ամենաբարձր մասը բռնում է մեծ և հնաւոր միջնաբերդը: Լայն և վիթխարի պատնէշները՝ ատամնաձև գըլներով ընդհատուած, շրջապատում են քաղաքը: Շըրջակայքի մի բարձր կէտից նայելով՝ քաղաքը հրաշալի տեսարան է ներկայացնում: Բարձր երևում են հին պարիսպները, իսկ գըրանից էլ բարձր միջնաբերդի լայն աշտարակը: Տների ծովը վայելուչ կերպով ընդմիջում են երկար ու բարակ մինարէները. անթիւ ծխնելոյզները բարձրանում են հարթ կտուրների վրայ և տեղ տեղ երևում են ծառերի կանաչ կատարները: Արևելեան և արևմտեան բարձրութեանց վրայ կանգնած են ամեհի ամրոցները. դոքա յիշեցնում են տեղի արտաքոյ կարգի նշանաւոր ռազմագիտական դիրքը, որովհետև այդտեղ է գտնուում նաև այն Դուռը, որի միջով կարող կը լինին զօրքերը՝ Կովկասից և Անդրկովկասից անցնել դէպի Անատոլիա:

Վերջին ռուս-տաճկական պատերազմի միջոցին Էրզրումը երկարատև պաշարման դիմացաւ, բայց ռուսներին յաջողուեց քաղաքի ետևի բարձրութիւնների վրայից ներս մտնել: Ռուսները կըրկին դուրս մղուեցան: Այդ յարձակման հետ միաժամանակ ռուսները մտադրուել էին և հարաւային կողմից վրայ տալ, բայց զօրքերը չկարողացան ճիշդ ժամանակին և նախագծուած որոշմամբ գործել և այդ պատճառով յարձակումն յետ մղուեցաւ տաճկական թնդանօթաձիգ զօրքերից: Վերջապէս ռուսները կարողացան այնուամենայնիւ քաղաքը գրաւել, սակայն Բեռլինի դաշնադրութեան որոշման համաձայն՝ ստիպուած էին նորից թողնել Էրզրումը:

Առաջին՝ թէև հեռուից ստացած տպաւորութիւնից յետոյ չէի սպասում, որ քաղաքում կը գտնեմ կեղտոտ փողոցներ ու քարուքանդ տներ: Վիթխարի պատնէշների ու քաղաքի ներքին մասի մէջ եղած տարածութեան վրայ ընդարձակ անմարդաբնակ հարթութիւն կայ: Առաջին պատահող փողոցները գիւղի տպաւորութիւն էին թողնում. և որքան առաջ էինք գնում դէպի քաղաքի ներսը, այնքան աւելի խառնւում և կուտակւում էին տները, այնքան աւելի եռում էր կեանքը: Խանութները շարուած էին միմեանց ետևից. ծախու էին հանուած ահագին քանակութեամբ եւրոպական չնչին իրեղէններ: Փողոցներում լիքն էին հայեր, յոյներ, պարսիկներ, քրդեր, զինուորներ ոստիկաններ, ոտից գլուխ փաթաթուած կանայք: Մեծ, առանձնաձև դռների ճանապարհներից երևում էին ահագին քանակութեամբ խանութներ, որ յիշեցնում էին Էրզրումի նշանակութիւնը վաճառականութեան համար: Ինձ զարմանք էր պատճառում ամրոցում եղած զօրքերի ահագին քանակութիւնը, որովհետև մինչև այժմ ասիական Տաճկաստանում ճանապարհորդելով՝ թէև բազմաթիւ զօրանոցներ և սպաներ էի տեսել, բայց զինուորներ, ոչ մի տեղ չկային:

Երկար որոնելուց յետոյ գտանք վերջապէս հայկական Պօղոս հիւրանոցը՝ մի կուլիսաձև, եռայարկ շէնք, որ կառուցուած է մի հին և մեծ մզկիթի մօտ եղած հրապարակի վրայ: Երկարատև պահեցողութիւնից յետոյ ինձ մնում էր շուտով հեռանալ հիւրանոցի խոհանոցը. բայց աւելի լաւ է, որ լռեմ այդ մասին, որովհետև ճշմարիտ որ ոչինչ լաւ բան չեմ կարող ասել:

Ընդհանրապէս ինձ այնպէս էր թըւում, որ լաւ օր չպէտք է տեսնեմ այստեղ. ոստիկանական լրտեսները շարունակ շրջապատում էին ինձ և իւրաքանչիւր քայլս դիտում: Քաղաքը դեռ ևս պաշարման դրութեան մէջ էր, որովհետև մի երկու ամիս առաջ էր տեղի ունեցել քրիստոնեաների և մահմեդականների այն ընդհարումն, որի միջոցին սպանուել էին մօտ քսան հոգի և երեքհարիւրն էլ վիրաւորուել էին: Արդէն Անգօրայից գալիս ճանապարհին ինձ պատմել էին, որ տաճկաց զինուորները ներս խուժելով հայոց եկեղեցին՝ կամեցել են կողոպտել սրբազան անօթները, բայց մի երիտասարդ հայ չկարողանալով տանել այդ անպատուութիւնը՝ հրացանով սպանում է տաճիկ սպաներից մէկին: Այդ դէպքից յետոյ քաղաքի հրապարակներում օրինաւոր պատերազմ է տեղի ունենում տաճիկների և քրիստոնեաների մէջ: Ոմանք այդ արիւնահեղ կռիւների պատճառը ռուսներին էին վերագրում, իբրև թէ դոքա են գրգռում հայերին, բայց այդ զրոյցների մէջ մի խօսքն անգամ ճշմարիտ չէր, այդ պատճառով և ես ինձ թոյլ եմ տալիս այդ դէպքերի ճշգրիտ պատմութիւնն անել:

1889 թուի ընթացքում Էրզրումի վալին մի անստորագիր նամակ է ստանում, որի մէջ գրուած է լինում՝ թէ հայոց դպրոցում պատերազմական մըթերքներ են պահւում և թէ այնտեղ մի գործարան կայ, ուր զէնք ու զրահ են պատրաստում: Նահանգապետը կարդալով այդ, ծիծաղում է և նամակը մի կողմը ձգում: Բայց կարճ միջոցից յետոյ վալին երկրորդ անստորագիր նամակն է ստանում նոյն բովանդակութեամբ: Վալին այդ բանն իբրև հետաքրքրական և ծիծաղելի դէպք, և ոչ թէ քաղաքական խնդիր դարձնելու նպատակով, պատմում է իր բարեկամին, Երզնկայի մութեսարիֆին: Վերջինս անմիջապէս այդ իրողութիւնը հեռագրում է Կ. Պօլիս մեծ վէզիրին և շուտով Ստամբուլից հրաման է գալիս Էրզրումի վարչութիւններին՝ հայոց դպրոցն ու եկեղեցին հետախուզելու: Հրամանը կատարւում է, առանց պատճառների մասին տեղեկութիւն տալու սաստիկ վրդովուած ու վիրաւորուած հայերին:

Ինչպէս պատմում էին՝ հետախուզութեան ժամանակ տաճիկ սպաները վայրենի կերպով են վարւում. նրանք պըղծում էին եկեղեցւոյ սրբազան անօթները և վիրաւորական խօսքեր ասում: Բայց ի հարկէ ոչ մի զէնք չեն գտնում: Հաւանական է, որ այս դէպքերը բոլոր քրիստոնեաներին վրդովեցին: Հայերը պատգամաւորներ ուղարկեցին նահանգապետի մօտ՝ բացատրութիւն պահանջելու: Վալին բաւական համարեց միայն պատասխանել՝ թէ եղածը կատարուել է բարձրագոյն հրամանով. բայց հայ ժողովուրդը գոհ չմնաց այդ պատասխանից: Վաճառականները մի քանի օր շարունակ փակեցին իրենց խանութներն ու գրասենեակները և այդպիսով զգալի խանգարումն առաջացրին քաղաքի սովորական կեանքի մէջ: Նահանգապետն այդ տեսնելով՝ կանչում է իր մօտ քրիստոնեայ համայնքների գլխաւորներին և պատուիրում, որ սրանք իրենց ազդեցութիւնը գործ դնեն՝ վաճառականներին համոզելու, որ կըկին բանան իրենց խանութները: Հոգևորականներն աշխատեցին այդ ուղղութեամբ, բայց յաջողութիւն չունեցան: Այն սակաւաթիւ վաճառականները, որ հետևելով նրանց խրատներին՝ խանութները բացին, միւսներից հռչակուեցան իբրև դաւաճաններ և ուրացողներ: Յառաջացան նորանոր պառակտումներ և կուսակցութիւններ. յուզմունքը նկատելի կերպով աճում էր քաղաքում և մահմեդականների հինաւուրց ատելութիւնը քրիստոնեաների դէմ սկսեց բորբոքուել: Հետևանքն այն եղաւ, որ մահմեդականները յարձակում գործեցին հայ ժողովրդի վրայ, հայոց եկեղեցու առաջը և այդպիսով առաջացաւ այն մեծ հրապարակային կոտորածը: Զօրքը միջամտեց, բայց որովհետև զինուորները բացառապէս իսլամներ են, կռիւը ողբալի հետևանքներ ունեցաւ Էրզրումի քրիստոնեայ ազգաբնակութեան համար: Պաշտօնական տեղեկութեանց համեմատ սպանուել էին 20 հոգի և 80 էլ վիրաւորուել, սակայն զոհերի թիւը տարաբախտաբար շատ աւելի է եղել:

«Եւրոպա» հիւրանոցում ես պատահեցի երկու ֆրանսիացի ճանապարհորդների, որոնք իրենց կառավարութեան յանձնարարութեամբ գիտական նպատակներով Պարսկաստան էին գնում: Վալին մի քանի շաբաթ պահում էր նըրանց Էրզրումում. Էրզրում գալուց առաջ արդէն Բայբուրթում նրանք բանտարկուել էին ոստիկանութեան ձեռքով: Նրանք գիտական նպատակներով տեղագրական սատուրագծեր էին պատրաստել ճանապարհին, սակայն թուրքերը հասկացողութիւն չունենալով այդ մասին՝ կարծում էին թէ դրանք գաղտնի քարտէզներ են պատրաստում իրենց երկիրը նուաճելու նպատակով: Նահանգապետն ամէն մի նորեկ եւրոպացի ճանապարհորդի լրտես էր համարում: Իմ գալն էլ ամենևին ցանկալի չէր նրան: Նա թէև ինձ տաճիկ պետութեան համար վտանգաւոր մարդ չէր համարում, բայց կասկածում էր, որ ես կարող եմ մի լրագրի թղթակից լինել և Էրզրումում պատահած արիւնահեղ դէպքերի մասին ճիշտ տեղեկութիւններ հաւաքել:

Ֆրանսիացի գիտականներին իրենց դժուար դրութիւնից ազատելու համար՝ հարկ էր եղել հեռագրական երկար բանակցութիւններ սկսել ֆրանսիական հիւպատոսարանի և Կ. Պօլսի դեսպանատան մէջ: Իմ Էրզրում գալու երկրորդ օրը նրանք ճանապարհ ընկան: Որպէս զի նրանք վտանգից ազատ մնան ճանապարհին, նահանգապետը բազմաթիւ անձերից բաղկացած մի պահնորդախումբ էր նշանակել նրանց ուղեկցելու. այդպիսով գիտական արշաւանքն այնպիսի այլանդակ կերպարանք էր ստացել, որ նոյն իսկ աւազակները կըվախենային:

(Կը շարունակուի):

---

*) Vom goldnen Horn zu den Quellen des Euphrat. Von Dr. E d m o n d N a u m a n n. München und Leipzig. 1895.

պ. Մուրավիովը—նոյմ. 2-ին և պետական կոնտրօլեօր պ. Փիլիպովը — նոյմ. 4-ին:

* * *

«Նովոյէ Վրէմիայի» թղթակից Արգուսը նկարագրում է մի բանկետ, որ տուել է յայտնի հայ հարուստ պ. Առաքել Ծատուրեանը և այդ խնճոյքին տալիս է մի տեսակ քաղաքական նշանակութիւն: «Բանկէտը—ասում է պ. Արգուսը—տեղի ունեցաւ „Saroy Hotel" հիւրանոցի դահլիճներից մէկում և շատ նշանաւոր էր թէ իր ճոխութեամբ և թէ հիւրերի որակութեամբ: Բացի դուքս Վեստմինստրից, որ համակրական հեռագիր էր ուղարկել, բոլոր հրաւիրուածները ներկայ էին և մի քանիսը մինչև անգամ գաւառից էին եկած: Կային պարլամէնտի անդամները, անգլիական եկեղեցւոյ կանոնիկոսները Լօնդօնի գլխաւոր լրագրների խմբագիրները, օտար թղթակիցները (նոյնպէս և «Նով. Վր. թղթակիցը) և տեղական նշանաւոր հայերը:

* * *

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ՄԻ ՈՒՍԱՆՈՂ

Փրանսիական մի համալսարանական քաղաքից ստացանք հետևեալ նամակը.

Մեծարգելի պ. Ա. Յովհաննիսեան.

Ես կովկասցի եմ, Երևանեան նահանգից, ծնողներից զրկուած, ծայրայեղ չքաւոր: Սակայն չնայելով իմ որբ և չքաւոր դրութեանս, Միջերկրական ալիքները ձգեցին ինձ Փրանսիա, ուր այս երրորդ տարին է ուսանում եմ: Պարտքեր ունիմ, բայց դոքա ինձ չեն սարսափեցնում. այլ այս ձմեռը մի կերպ անցկացնելու հոգսը, որովհետև առողջութիւնս խանգարուած է, շնորհիւ ցուրտ և խոնաւ սենեակների, ռէմատիզմից մի քանի ամիս է տանջվում էի, դեռ չեմ կազդուրուած, իսկ ձեռքիս մէկ կոպէկ չկայ:

Հարուստ աղաների-վաճառականների շատ եմ դիմած, բայց նոյն իսկ պատասխան չեմ ստացել. ստիպուած ուրիշ ելք չգտնելով դիմեցի Փրանսիայի լուսաւորութեան նախարարին, որ և թոյլ տուեց Ecole Normal-ի աշակերտների հետ միասին ճաշել: Այդ արդէն բաւական մեծ օգնութիւն էր ինձ համար, ծախքերիս մէկ մասը կրճատուեց: Այս ամիս 250 փրանկ վճարելու անհրաժեշտ պարտք ունիմ (բոլոր պարտքերս 680 փրանկ է) որպէս զի դրանից յետոյ կարողանամ ընթրել, առանց որի ստիպուած պիտի լինիմ քաղցի ենթարկուել...

Այսպիսի դրութեան մէջ, ուրիշ յոյս չունենալով, դիմում եմ Ձեզ, Ձեր օգնութեանը, խնդրելով խոնարհաբար, օգնէք ինձ այս 250 փրանկ պարտքս վճարելու:

Իմ ցանկութիւնս չէ որ դուք ինքներդ ուղարկէք, այլ դիմէք մի նշանաւոր ազգայնի, որոնցից շատերին դուք ճանաչում էք, յայտնէք իմ նեղ դրութիւնս և Ձեր կողմից միջնորդէք, քանի որ մի մեծ բան չէ մի նշանաւոր դրամատէրի համար, մի չքաւոր ուսանողի օգնելը 250 փրանկով:

Ահա շուտով ուսումը կըսկսուի, շատ գրքերի կարիք ունիմ, ձեռքիս մէկ սու չկայ, շորերս մաշուած, կօշիկներս պատառուած, հիւանդութեան ժամանակ ժամացոյցս և ուրիշ իրեր Mont-de-Piété-ում է գրաւ դրած: Ահա այս է իմ ներկայ վիճակս: Ոչ մի մերձաւոր բարեկամ չունիմ, աշխարհումս միայնակ եմ:

Յուսով եմ, որ Դուք անտես չէք անիլ խոնարհ խնդիրս, լուրջ ուշադրութիւն կը դարձնէք դժբախտիս վրայ, որ և ժամանակին երախտամոռ չեմ մնալ:

Մնամ յարգանօք՝
X. Y.

Սեպտեմբերի 16/4՝ին 1895 թ.

Տպագրելով ներկայ նամակը, յայտնում ենք, որ եթէ մեր ազգայիններից մէկը կամ մի քանիսը միանալով կամենային օգնել այս խեղճ ուսանողին՝ ուղարկելով նորան 250 փրանկ գումարը, ապա խմբագրութիւնս կը հաղորդէ նորան կամ նոցա ուսանողի ազգանունը և ճիշդ հասցէն:

* * *

ՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ ՇԱՄԱԽՈՒՄ

Ամսոյս 6-ին տիկին Ջաբէլը և պ. Պարոն-Սարգսեանը մասնակցութեամբ տեղական թատերասէրների քաղաքիս ատս վաճառական Վօլկովի դահլիճում տուին մի հայկական ներկայացումն: Խաղացին «Անբախտ սէր» դրաման՝ հինգ գործողութեամբ, և «Ես էի կատածալիկը» վօդևիլը մէկ արարուածով:

Ով մի քանի տարի շարունակ ապրել է հեռու լուսաւորութեան կենդրոններից՝ գաւառական մի խուլ ու մութ քաղաքում, կամ մի որևէ յետ ընկած ու աշխարհից մոռացուած գիւղում, նա միայն կարող է ըմբռնել և լիովին գնահատել՝ թէ որքան թարմացուցիչ, որքան բարձր ու վսեմ զգացմունքներ կարող է ներշնչել մարդու մէջ մի այնպիսի ներկայացումը, որպէս էր այժմ մեզ մօտ հիւր գտնուող մեր սիրելի դերասանների ներկայացումը:

Օրինակ՝ ո՛րքան թարմութիւն, ո՛րքան ոյժ և անկեղծ ոգևորութիւն կայ դերասանուհի Ջաբէլի մէջ: Նորանում ամեն բան բնական է, իրական է. լացն ու ծիծաղը, ժպիտն ու արտասուքը արտայայտվում ու շաղկապվում են իրար հետ մի զարմանալի ներդաշնակութեամբ: Նա մերթ տխուր է ու սրտամորմոք, մերթ խրոխտ է ու քաջասիրտ. Նա յուսահատվում է, երբ լսում է հօր սպառնալիքները. Նորան բռնի ստիպում են սիրել՝ իր մանկական քնքոյշ մարմինն ու սիրավառ սիրտը նուիրել մի զառամեալ ծերունու, որին նա ատում է և որից նա զարշում է: Բայց երբ իր աչքերի առաջ դարձեալ տեսնում է իր սիրելի, իր վարդ ու կարմիր Ռուբէնեանին, ոգևորվում է. Նրա աչքերում փայլում է յուսոյ և ուրախութեան սրբազան կրակը և նա այդ րոպէին աննման է: Աւելացրէք այդ բոլորի վրայ և նորա ներդաշնակ ու թովչական ձայնը իր նուրբ և քնքոյշ ելևէջներով և այն ժամանակ միայն դուք կարող էք ըմբռնել նազելի տիկնոջ տաղանդն իր ամբողջ լրութեամբ:

Հոգեբանական զարմանալի ճշտութեամբ կատարեց ութսունամեայ սիրահար ծերունազարդ կոմսի դերը պ. Պարոն-Սարգսեանը: Ամուսնանալու հոգսերով զբաղուող ծերուկ կոմսը կատակ չէ անում. նա անկեղծօրէն սիրահարուած է ծաղկափթիթ Յուլիանէի վրայ. Նորա դրութիւնը կօմիկօ-տրագիկական է: Հետախոյզ ու խորագին դիտողի ուշադրութիւնից չի կարող սպրդել այն հանգամանքը, որ որքան ծիծաղելի ու զուարճալի է իր արտաքին ձևերով ու իր պառաւային միմիկայով այդ բարեհոգի ծերուկը, նոյնքան խղճալի, զզուելի ու գարշելի է նորա ներքին հոգեկան պատկերը:

Թատերասէրներից պ. Սարգիսբէգեանը թէև ազատ էր պահում իրան բեմի վրայ, սակայն նորա խօսակցութիւնը մի փոքր չոր էր. իսկ պ. Մանուէլ Յովհաննիսեանը, ինչպէս երևում է, առաջին անգամն է բեմ դուրս գալիս. այս պատճառով էլ նա, կարծես, մի տեսակ կաշկանդուած էր և աւելի նման էր իր տիկնոջ հրամանները կատարելու պատրաստ կանգնած մի ծառայի, որ ձեռները զինուորի նման միշտ կողքերից քաշ արած ունի, քան սիրահարուած երիտասարդի:

Մնացած դերերն աննշան էին և մենք նոցա մասին խօսելն աւելորդ ենք համարում:

Չնայելով այս և նոցա նման մի քանի ուրիշ անյարմարութիւններին, ներկայացումն ընդհանրապէս յաջող անցաւ և հասարակութիւնը շատ գոհ մնաց: Դերասաններն արժանացան բուռն ծափահարութեան և մի քանի անգամ բեմ հրաւիրուեցան: Տիկին Ջաբէլին նուիրեցին մի բաժակ արծաթեայ բաժակակալով և մետաքսեայ նուրբ գործուած մի գլխաշալ, այլ և կենդանի ծաղիկներից փնջեր:

Հասարակութեան խնդրանօք տիկին Ջաբէլը և պ. Պարոն-Սարգսեանը մնում են մեզ մօտ երկրորդ և երրորդ ներկայացման, որ յուսով ենք ժողովուրդն այս անգամ աւելի սիրով կը վերաբերուի դէպի բեմական սուրբ գործը, որից ահա երրորդ տարին է, շնորհիւ անպատեհ հանգամանքների, զուրկ է մնացել նա:

Արտազ:

9 սեպտեմբ. 1895 թ.
Շամախի:

* * *

ԴԱԴԱՐՈՒՄ. Օրիան օրաթերթը օտար մամուլի տնօրէնութեան կողմէ անպայման կերպով դադարման դատապարտուած է երէկուընէ սկսեալ:

* * *

„Музыкальный календарь"-ի (երաժշտական օրացոյց) խմբագրութիւնը խնդրում է Ռուսիայում ապրող բոլոր երաժիշտներին և երաժշտական գործիչներին հաղորդել իրանց մասին կարճ կենսագրական տեղեկութիւններ՝ անուն, ազգանուն, մասնագիտութիւն և ճիշդ հասցէն: Այս տեղեկութիւնները որքան կարելի է շուտ պէտք է ուղարկել հետևեալ հասցէով՝ Петербургъ. Троицкая улица № 38 А. С. Габриловичу.

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Խմբագիր.

Ձեր պատուական լրագրի № 92, ներքին տեսութեան բաժնում, հրատարակուած էր, մի տեղեկութիւն, որ անցեալ 1894 թուականում թէ Երևանեան նահանգում և թէ Կարսի շրջանում պ. Զ. Ջանփոլադեանի կողմից վերցրած արքունական աղահանքներից ո՛րքան աղ է արտահանուած:

Այդ տեղեկութեանց մէջ՝ ինչ վերաբերում է պ. Զ. Ջանփոլադեանի գործառնութեանը, սպրդած են մի քանի խոշոր անճշտութիւններ:

Ուստի ես իբրև ճիշտ տեղեակ պ. Ջանփոլադեանի այդ գործառնութեան սկսեալ 1892 թուականից, պարտք եմ համարում ուղղել այդ անճշտութիւնները՝ հիմնած անհերքելի փաստերի վրայ:

1) Պ. Ջանփոլադեանի Կողբի աղահանքից արտահանուած է երեք տարուայ ընթացքում, ընդամենը 125,421 փ. աղ. որ ասել է՝ թէ տարեկան միջին թուով 41,807 փ. այլ ո՛չ 100000 փութ ինչպէս նշանակուած էր Արձագանքում:

2) Կողբի աղահանքում արտադրուած աղը ո՛չ թէ 90 մշակների աշխատութեամբ է եղած, այլ 120 մշակների, իւրեանց գրաստներով ի միասին:

3) Կաղզուանու աղահանքից արտադրուած աղը 45 մշակների ձեռամբ է եղած և ոչ թէ 34 մշակների, ինչպէս ասուած էր:

4) Պ. Զ. Ջանփոլադեանի աղահանքներում դժբաղդ դէպքից մեռած է միայն մի վարպետ, և այն իր անզգուշութիւնից:*)

Ընդունեցէք և այլն.

Աղաբէգ Կարճիկեանց:

12 սեպտ. 1895 թ.
Աղէքսանդրապօլ:

* * *

ՆԿԱՐԻՉ Կ. ՆՇԱՆԵԱՆ

Ներկայումս Թիֆլիզում է գտնվում մի հմուտ նկարիչ, բառի բուն, եւրոպական իմաստով: Դա նկարիչ—ժանրիստ և պօրտրէտիստ պ. Կարլ Նշանեանն է, մի գեղարուեստագէտ, որի անուան կողքին անկարելի է շարել մեր տեղական նկարիչների անունները:

Որքան և վերջիններից շատերը բարեխղճութեամբ են վերաբերվում դէպի իրենց արուեստը, այսու հանդերձ դոցա արուեստը շատ և շատ աննշան բան է: Սորանց պակասում է (և մենք բազմիցս շեշտած ենք այդ կէտը) բուն գեղարուեստական զարգացած ճաշակ և, որ ամենաէականն է, ինքնուրոյն ստեղծագործութիւն, ուրիշ խօսքով «կօմպօզիցիա»: Եւ հէնց այս վերջինն է, որ իրաւունք է տալիս մէկին «նկարիչ» կոչուելու:

Մեր նկարիչները թէև, ինչպէս ասացինք, աշխատասէր և, ոմանք ընդունակ են, բայց դոցա առ առաւելը կարելի է ընդօրինակող (copiste) անունը տալ: Դոքա չեն ստեղծում, այլ՝ թէ բնութիւնը և թէ պատկերը ընդօրինակում են տառացի կամ նուազ զարգացման տեխնիկայով և շատ կամ փոքր հաւատարմութեամբ:

Բուն նկարչութիւնը՝ բանաստեղծութիւն է: Երկուսն էլ՝ թէ բանաստեղծը և թէ նկարիչը—ստեղծում են, այսինքն իրենց բնաբանը կամ սիւժէտը առնելով արտաքին տեսանելի աշխարհից, ի ներքուստ նոր հոգւով, նոր, ինքնուրոյն գոյներով, որոշակի, գեղեցիկ լուսաւորութեամբ ու, առանց բնութեան էական-իրական յատկանիշները խախտելու, մի որոշ վերամշակութեամբ են հանդէս գնում: Ով փոքր ի շատէ գաղափար ունի Հոմերոսի, Վիրգիլիոսի, Սօֆոկլէսի անմահ ստեղծագործութեանց մասին և տեսել է Ռաֆայէլի, Ռուբէնսի, Քլօդ Լօրէնի կամ Գիւստավ Դօրէի վրձնի հրաշակերտները, նա լաւ կը հասկանայ իմ միտքը:

Ուրեմն, դարձեալ կրկնում եմ, նկարիչը նոյն բանաստեղծն է: Նա նախ նկարում է իր տետրակում (Skizzenbuch) հում նիւթերը՝ այստեղ ծառերի մի խումբ, այնտեղ մի չալարուան, ուրիշ տեղ մի գեղջկուհու տիպար, մի այլ տեղ աւերակների մի մնացորդ և ահա մի օր, մի առանձին ներշնչման տակ վրձինն առնում նստում է ու իրեն համար պատմական կամ առօրեայ կեանքից որևէ բնաբան առնելով, կտաւի կտորի վրայ վրձնի շարժուածքով ստեղծում է մի ամբողջ պօէմա, աչքով տեսնելու ու մտքով հեռուն խորասուզուելու մի ամբողջ պատմութիւն, արկածք:

Պատմական կամ առօրեայ կեանքից այս կամ այն նիւթի բնաբան առնող նկարիչները կոչվում են ժանրիստներ: Ահա այդ դասակարգին է պատկանում պ. Նշանեանը:

Նորա «Մշեցոց հարսանիքը» նկարչութեան մի գլուխ գործոց է, որ պատիւ կարող է բերել եւրոպացի որևէ տաղանդաւոր նկարչի: Ափսո՛ս, որ խաշականը՝ որ մի մեծադիր պատկեր է (բուն իր տարածութեամբ աւելի քան չորս արշին երկարութեամբ և երեք արշին բարձրութեամբ), այստեղ չէ, նա վաճառուած է: Սակայն բաւական է մի անգամ նայել դորանից հանած լուսանկարին (թէև շատ անյաջող լուսանկար է) համոզուելու համար, որ մենք գործ ունինք խոշոր մի վարպետ արուեստագէտի հետ: Այդ պատկերի մէջ ամեն բան կատարելութեամբ է հասցրած. փայլուն համախմբումն (группировка), տիպարների խիստ և ճիշտ նկարագիր, նկարի (dessin) լիակատար և խիստ կանոնաւորութիւն ու ներդաշնակութիւն, բոլոր դէմքերի ուրախ, հարսանեկան տրամադրութիւն և մանրամասների կատարեալ մշակութիւն, մի բան, որ ոչ միայն մեր, այլ և ռուս յայտնի նկարիչներից շատերին պակասում է: Եւ այդ բոլորի հետ ի միասին ենթադրելու է և վառ ու տաք երանգ (colorit), որ յատուկ է մեր նկարչին:

Պարոն Նշանեանի մի գերազանց յատկութիւնը հէնց այն է, որ նա մշակում, աւարտում է պատկերի բոլոր մանրամասները՝ ճարտարապետական մասը, օրնամենտ, կահ-կարասիք, արդուզարդ և այլն, մինչդեռ շատ նկարիչներ այդ չեն անում, ուստի պարոն Նշանեանի պատկերները ամբողջ, լրացեալ տպաւորութիւն են գործում դիտողի վրայ:

Բայց պ. Նշանեանը նաև աննման պատկերահան է (портретистъ): Նա իր դիմացինի պատկերը նկարում է այնպէս, որ տեսնողի կրծքից ակամայ մի զարմանքի բացականչութիւն է դուրս թռչում: Դուք չէք կարողանում զսպել ձեր հիացումը զարմանալի նմանութեան հանդէպ: Դա ձեր ծանօթի կամ բարեկամի դէմքն է, ճիշտ այնպէս, ինչպէս նա կայ, կենդանի, գրեթէ խօսուն, մի պատկեր, որի մէջ անխարդախ արտայայտուած են ոչ միայն նորա մօդելի բնորոշ գծերը, այլ և նորա բնաւորութիւնը, նորա ներքին եսը, որ մի առանձին ուժով դրոշմվում է աչքերի ցոլքի ու բերանի գծի շարժուածքի մէջ: Եւ այդ ամենի հետ ի միասին նա իր բոլոր նկարները լուսաւորում է մի տաք, թրթռուն երանգով (colorit), որ յատուկ է մանաւանդ իտալացի նկարիչներին: Իսկոյն երևում է, որ պարոնը իր ճաշակի սնունդն առել է նկարչութեան այդ աւանդական աշխարհում, իւր վրձնի վրայ ազդել են Տիցիան, Տիէպոլօ, Կորրէջիօ, Պաօլօ, Վերօնէզէ և այլն իրենց վառ ու տաք գոյներով: Առանձինն թող ստուգեն ցանկացողները անձամբ դիտելով նորա հիանալի էտիւդներն ու աւարտած տիպարները, որպիսիք են «Կահիրեցի հարիւրամեայ Թուրք ծերունին»՝ «Գնչուհին» (սա ամենից գեղեցիկն է իր կենդանութեամբ), «Պօլսեցի հայը», «Եգիպտացի պարուհին», «Արաբ դերվիշը», և այլն: Անկեղծօրէն խորհուրդ ենք տալիս թէ հայ և թէ օտարազգի՝ ճաշակի տէր և գեղարուեստասէր ունևորներին օգտուել պ. Նշանեանի նկարներից, մի նկարչի, որ թէ իր եռամեայ բնակութեան միջոցին Եգիպտոսում և թէ Ամերիկայում բազմաթիւ նկարներ վաճառել է եւրոպացի և ամերիկացի գնահատողներին, ի միջի այլոց վաճառել է Ամերիկայում իւր «Մշեցոց հարսանիքը»: Մշակն արժանի է վարձու իւրոյ: Պէտք է 'ի սէր գեղարուեստի նպաստել արտիստին՝ միջոց տալով նորան աշխատելու և աւելի ևս զարգացնելու իր սիրած արուեստը:

Յովհաննէս Լալայեան:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Անգլիական գրական շրջաններում պատրաստութիւն կայ նոյեմբերի 22-ին տօնել Թոմաս Կարլէյլի ծննդեան հարիւրամեակը: Այդ օրուան համար Chambers ի գրավաճառանոցը կը հրատարակէ Կարլէյլի պատկերազարդ ժողովրդական կենսագրութիւնը:

—

Պեստալոցցիի գրուածքների հրատարակիչ պ. Զէյֆարթը նորերումս մի ուղևորութիւն կատարեց Զուիցերիա, հռչակաւոր մանկավարժի մինչև այժմ չհրատարակուած և նոր գրած թղթերի և նամակների ժողովածուն աչքի անցկացնելու համար: Պեստալոցցիի նամակների մէջ երկուսը, պ. Զէյֆարտի, կարծիքով առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում: Այդ նամակներից մէկի մէջ Պեստալոցցին խօսում է իր հաստատած աղքատների դպրոցի մասին, միւսի մէջ, որ ուղղած է Վաադ կանտոնի լանդմանին, նա մանրամասնօրէն բացատրում է իր մանկավարժական սիստեմի սկզբունքները: Նոյն կանտոնի հնադարանում գտնուել է նոյնպէս Պեստալոցցիի կտակը: Այս բոլոր թղթերը շուտով հրատարակուելու են:

—

Համալսարանական կրթութիւն տարածելու փորձը Բելգիայում, անգլիական University Extension ի օրինակով, մեծ յաջողութեամբ է պսակուել:

Անցեալ դպրոցական տարուայ ընթացքում «ազատ համալսարանը երկրի 14 մասերում դասախօսութիւնների 21 դասընթաց էր հաստատել, որոնք 3500 մարդ էին գրաւել: Առաջիկայ ուսումնարանական տարուայ ընթացքում 96 դասընթացք է նշանակուած, որ կըկարդան 50 պրօֆեսօրներ:

—

Մօտերումս «Vossische Zeitung»-ում հրատարակուած էր պրօֆ. Փիշէրի նկատողութիւնը, որով ցանկութիւն է յայտնում հանդիսաւոր կերպով տօնելու Յովհաննէս Գուտենբերգի ծննդեան հինգհարիւրամեակը և առաջարկուած է որոշել դորա համար 1897 թուականի ս. Յովհաննու տօնի օրը: Բայց տպագրութեան մեծ գիւտ անողի ծննդեան օրուայ մասին ճիշտ տեղեկութիւն չկայ, ոմանք 1397-ը, իսկ այլք 1398 թուականն են համարում նրա ծննդեան տարին: Այս հանգամանքն աչքի առաջ ունենալով Լօնդօնի Athenaeum ը կարծում է, որ լաւ կըլինի այդ տօնը կատարել 1900 թուականին, պատճառ բանելով, թէ այդ տօնը XX-րդ դարու, առաջին տարին աւելի մեծ յաջողութեամբ միջազգային բնաւորութիւն կըստանայ:

—

Անգլիական հոգեբան յայտնի Ջէմս Սէօլլին պատրաստում է հրատարակութեան համար մի վերին աստիճանի հետաքրքրական հետազօտութիւն երեխայոց հոգեբանութեան մասին, որ կըկրէ — «Studies in Childhood» վերնագիրը: Այդ գիրքը կազմուած կըլինի մի շարք էտիւդներից երեխայոց երևակայութեան, նոցա մտածելու եղանակի, լեզուի և այլն մասին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԱՃԿԱՍՏԱՆ. — „Neue Freie Presse"-ին հաղորդում են իբր թէ տաճկաց մեծ եպարքոս Սայիդ-փաշան շրջաբերական է ուղարկել բոլոր նախարարներին, նահանգապետներին և ուրիշ պաշտօնեաներին, որով ամենախիստ կերպով նախատում է տաճիկ աստիճանաւորների անընդունակութիւնը, անկարգութիւնը և անարդար հակումները: Սուլթանը ցանկանում է, ասուած է այդ շրջաբերականի մէջ, որ արդարութեան և օրինականութեան ոգին թագաւորէ նրա բոլոր կառավարութեան և բոլոր հաստատութիւնների մէջ և հրամայում է անմիջապէս արձակել պաշտօնից այն բոլոր ծառայողներին, որոնց ընթացքը կըհակասի սուլթանի ցանկութեանը և նրա սկզբունքներին: Երևի ոչ մի ծառայող չի արձակուի, որովհետև նրանք ամենքն էլ ծառայում են սուլթանի դրած սկզբունքներին:

—

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ.— «Daily News» լրագիրը հաւաստացնում է, որ իշխան Հօհէնլօէն գնացել է Պետերբուրգ առանձին յանձնարարութեամբ, որ խօսէ թէ, հայկական ու չինական հարցերի և թէ այն անհրաժեշտ միջոցների մասին, որ պիտի ձեռնարկուի յեղափոխական կուսակցութեանց դէմ:

—

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ.—Memorial Diplomatique»-ն ասում է որ Պետերբուրգի նախկին անգլիական դեսպանը փոխադրուած է նոյն պաշտօնով Բերլին, որպէսզի նպաստէ Անգլիայի և Գերմանիայի բարեկամանալուն:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Սեպտեմբերի 14-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Սեպտեմբերի 5 ից հրամայուած է, որ սկսած 1895 թըւի հոկտեմբերի 1-ից կազմակերպուեն—երեք գվարդիական հետևոտն թեթև թնդանօթաձիգ գնդեր, որ պիտի մտնեն 3-րդ թնդանօթաձիգ խմբի մէջ, տասն թեթև դաշտային թնդանօթաձիգ գնդեր, որոնք երկերկու պիտի մտնեն 2-րդ, 4-րդ, 6-րդ, 10-րդ և 18 րդ թնդանօթաձիգ խմբերի մէջ և պիտի անուանեն եօթերորդ և ութերորդ գնդեր այդ խմբի և հինգ թեթև հետևոտն գնդեր իւրաքանչիւր հրացանաձիգ զօրախմբի համար եւրոպական Ռուսաստանում. այդ խմբերը պիտի անուանուեն երրորդ թեթև գնդեր այս ինչ հրացանաձիգ զօրախմբի:

«Ռուսսկիյ Ինվալիդը» հաղորդում է, որ հեծելազօրքի Օգոստափառ Ընդհանուր Վերատեսուչը գննում է Վարշավայի շրջանի հեծելազօրքի վիճակը և սեպտեմբերի 24-ին պիտի ներկայ լինի հեծելազօրի մեծ զօրահանդէսին, որ լինելու է Վարշավայի և Սկերնեվիցի մէջ. այդ հանդէսին պիտի մասնակցեն 140 էսկադրօններ և հարիւրակներ և 54 թնդանօթներ:

ՓԱՐԻԶ.—Լուր կայ, որ պ. Մօրհէյմ ուրբաթ օրը ուղևորվում է Կոնտրէկսէվիլ այցելելու իշխան Լօբանով-Րօստովսկուն: Շաբաթ կամ կիւրակէ նախարարը և դեսպանը միասին կուղևորուեն Փարիզ:

Սեպտ. 15-ից.

Կ. ՊՕԼԻՍ.—Լուր կայ, որ տաճիկ կառավարութիւնը Ջեդդայում ամբոխի վիրաւորած հիւպատոսներին հետևեալ վարձատրութիւնը պիտի տայ. ռուսաց հիւպատոսին—200 հազար փրանկ, անգլիացոց—10 հազար ֆ. ստ. և ֆրանսիական հիւպատոսարանի քարտուղարին—100 հազար ֆր.:

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի փորձուած գործակատար որոնում է պաշտօն: Հասցէն թողնել խմբագրատանը:
(1—2)

ԹԻՖԼ. Ք. ՎԱՐԿԻ ԸՆԿ. ՎԵՐԱՀՍԿ. ՅԱՆՁՆ. ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Խնդրում են պ. պ. լիազօրներին շնորհ բերել 26-ին սեպտեմբերի 1895 թուի, առաւօտեան ժամը 10-ին
Արտակարգ ժողովի
Որ պիտի կայանայ քաղաքային խորհրդի դահլիճում:
Ժողովի զբաղմանց առարկաներն են

1) Վարչութեան զեկուցումը կանոնադրութեան մի քանի §§ յաւելուածների ու փոփոխութիւնների ծրագրով հանդերձ այն առաջարկութեամբ, որ արել է ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶՕՐՈՒԹԻՒՆ ֆինանսների պ. նախարարը և որ բացատրուած է Վարկային մասի առանձին գլխաւոր հաղորդագրութեան մէջ այս տարուան մայիսի 29-ից № 8255, որ վերաբերում է նախարարութեան միջնորդութիւն անելու՝ թոյլ տալու այսուհետև փոխառութեան համար հրատարակել միայն $4^{1}/_{2}\%$ օբլիգացիաներ և այս նիւթի համար վերահսկիչ յանձնաժողովի զեկուցումը:

2) Վարչութեան և վերահսկիչ յանձնաժողովի զեկուցումը այս մասին որ փոքրացնել պարտատէրերից ստացուող, համաձայն § 12 կանոնադրութեան %, ինչպէս միանուագ, նոյնպէս և ամեն տարի Վարչութեան ծախքերի համար և՝

3) Վարչութեան դիրեկտորների երկու կանդիդատների ընտրութիւնը:
(1—1)

ԹԻՖԼԻԶԻ ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Կիրակի, սեպտեմբերի 17-ին
Հայ դերասանական ընկերութիւնը կը ներկայացնէ
ԴՕԿՏՕՐ ՇՏՕԿՄԱՆ
Դր. 5 գոր.: Հեղ. ԻԲՍԷՆԻ, թարգմ. Ս. ՀԱԽՈՒՄԵԱՆԻ
Մասնակցում են օր. օր. Վարդուհի, Արուսեակ. պ. պ. Աբելեան, Տէր-Դաւթեան, Վրոյր, Յարութիւնեան, Աւետեան, Ստեփանեան, Արարատեան և այլք:
Սկիզբը ժամը 8-ին երեկոյեան:

---

*) Մեր հաղորդած տեղեկութիւնները պաշտօնական աղբիւրից էին և հրատարակուած էին նաև «Կավկազ» պաշտօնական լրագրում:
Ծ. Խ.

Дозволено цензурою, Тифлисъ 16-го Сентеабря 1895 года. Տպարան Մ. Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и К°. На Михайловской ул., № 81.